ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հուլիսի 2024թ. N ՄՈ/193 -Ա

ք. Արմավիր

«ԱՄԲԵՐԴԻ Հ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԶՈՀՐԱԲ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Զոհրաբ Մաղաքյանի 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զոհրաբ Մաղաքյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2024 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 16-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Զոհրաբ Մաղաքյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վանիկ Խաչատրյանին:
3. «Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վանիկ Խաչատրյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Զոհրաբ Մաղաքյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 19-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-09 16:18:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի թողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**